

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ 2

- 1.1 ՀՀ կառավարության որոշումներ ----- 2
- 1.2 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ----- 3

2. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ 4

- 2.1 Ծրագրեր և կատարողականություն ----- 4
- 2.2 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների ----- 6
- 2.3 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում ----- 6
- 2.4 Հարկային և մաքսային թվերի համառոտագիր ----- 7

1. ԶԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 ԶԶ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ	«Հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթների վերաբերյալ պարզաբանումների տրամադրման կարգը հաստատելու մասին» ԶԶ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	29 հուլիսի 2010թ., N 1007-Ն
Հրապարակումը	ԶԶ պաշտոնական տեղեկագիր № 41 (775), 25.08.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթների վերաբերյալ հարկային մարմնի կողմից (ԶԶ ֆինանսների նախարարության հետ համաձայնեցմամբ) պարզաբանումների տրամադրման կարգը:



Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 27-ի N 582-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԶԶ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	19 օգոստոսի 2010թ., N 1037-Ն
Հրապարակումը	ԶԶ պաշտոնական տեղեկագիր № 42 (776), 01.09.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվել են «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 27-ի «Հաշվետու տարվա արդյունքներով հարկային մարմնի կողմից հարկ վճարողների (ապահովագիրների) վերաբերյալ տվյալների հրապարակման կարգը հաստատելու մասին»

N 582-Ն որոշման մեջ կատարված փոփոխությունները՝ հարկային մարմնի կողմից հարկ վճարողների (ապահովագիրների) վերաբերյալ տվյալները հարկային մարմնի **պաշտոնական ինտերնետային կայքում** հրապարակելու վերաբերյալ:

1.2 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր հարկային պետական ծառայության 2004 թվականի ապրիլի 2-ի N 1-05/7-Ն հրամանում լրացում կատարելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ Նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	28 հունիսի 2010թ, N 1499-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N 21(373), 15.09.2010թ.

Համառոտ նկարագիր

Հրամանով լրացում է կատարվել ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության 2004 թվականի ապրիլի 2-ի «Ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգը հաստատելու և ՀՀ հարկային տեսչության 1998 թվականի փետրվարի 5-ի N01/10 ու 1999 թվականի փետրվարի 11-ի N01/8 հրամանները ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1-05/7-Ն հրամանում, ըստ որի՝ որպես

համախառն եկամտից նվազեցվող ծախս է համարվում նաև գործատու հանդիսացող ռեզիդենտների կողմից իրենց վարձու աշխատողների առողջության ապահովագրության համար կատարված ապահովագրավճարները՝ յուրաքանչյուր վարձու աշխատողի համար եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա հաշվով մինչև տասը հազար դրամի չափով:

Փաստաթուղթ	«Ակցիզային պահեստ ռեժիմի կիրառման դեպքում օրենքով նախատեսված փաստաթղթերի դուրսգրման կարգի վերաբերյալ» ՀՀ ԿԱ ՊԵԿ Նախագահի և ՀՀ ֆինանսների նախարարի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	29.08.2010թ, N8, 30.08.2010թ. N569-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N 21(373), 15.09.2010թ.

Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ ՀՀ տարածքում արտադրվող և ՀՀ տարածք ներմուծվող այն ապրանքների տեղաշարժը, որոնց պահպանումը, տրամադրումը, տեղափոխումը (ներառյալ, հարկ վճարողի մանրածախ առևտրի օբյեկտ) իրականացվում են «Ակցիզային պահեստ» ռեժիմի պայմաններին համապատասխան, իրականացվում է.

1. ապրանքների առաքման (այդ թվում՝ անհատույց օտարման) դեպքերում՝ դուրս գրված հարկային հաշվով, բացառությամբ այն դեպքերի, երբ ապրանքների օտարումը ենթակա չէ ավելացված արժեքի հարկով հարկման (ազատված է ԱԱՀ-ից կամ





հարկվում է ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով): Այն դեպքերում, երբ ապրանքների օտարումը ենթակա չէ ԱԱՀ-ով հարկման՝ ապրանքների օտարումը իրականացվում է հարկային հաշիվ չհանդիսացող հաշվարկային փաստաթղթով: Ապրանքների առաքում կարող է իրականացվել միայն ակցիզային պահեստից,

2. կոմիսիայի, գործակալության կամ հանձնարարության պայմանագրի հիման վրա ապրանքները հանձնելիս (տրամադրելիս)՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ 03.03.2010թ. «Ակցիզային պահեստ» ռեժիմի կիրառումն ապահովող կարգերը, մատյանների և փաստաթղթերի

ձևերը հաստատելու մասին» թիվ 411-Ն հրամանով հաստատված ձևի ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների տրամադրման փաստաթղթով,

3. վերջնական սպառողին (քաղաքացիներին) օտարման նպատակով ապրանքների տեղափոխման դեպքերում՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 03.03.2010թ. «Ակցիզային պահեստե ռեժիմի կիրառումն ապահովող կարգերը, մատյանների և փաստաթղթերի ձևերը հաստատելու մասին» թիվ 411-Ն հրամանով հաստատված ձևի ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների տեղափոխման փաստաթղթով:

2. ՀԱՐԿԱՅԻՆ և ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԴՐՎԱԳՆԵՐ

2.1 | Ծրագրեր և կատարողական

2.1.1 | Ծրագրեր և կատարողական /հարկային ծառայության մասով/

1. Հարկային ծառայողների պաշտոնների նկարագրերի սահմանում

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 27.08.10թ. թիվ 1754-Ա հրամանով հաստատվել են ՀՀ ԿԱ ՊԵԿ խոշոր **հարկ վճարողների հարկային տեսչության հարկային ծառայողների** պաշտոնների նկարագրերը: Հաստատված **պաշտոնների նկարագրերը** հնարավորություն են ընձեռելու հետագայում աշխատանքային ծրագրերի կազմումը և կատարողա-





կանի գնահատումն իրականացնել տվյալ ստորաբաժանման համար սահմանված համապատասխան գործառույթների և հարկային ծառայության տվյալ պաշտոնի նկարագրին համապատասխան:
Հարկ է նշել, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային (տարածքային) տեսչությունների պաշ-

տոնների նկարագրերը սահմանվել էին 04.04.10թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի թիվ 416-Ա հրամանով: Ընթացքում է վերադաս հարկային մարմնի հարկային ծառայողների պաշտոնների նկարագրերի սահմանման գործընթացը:

2. Հարկային ծառայողների աշխատանքների կատարողականի գնահատման համակարգի հիման վրա հարկային ծառայողների խրախուսման մեխանիզմների սահմանում

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 15.09.10թ. թիվ 2060-Ա հրամանով հաստատվել է հարկային, մաքսային և քաղաքացիական ծառայողների աշխատանքային ծրագրի կատարողականի գնահատման համակարգի հիման վրա տարեկան խրախուսման կարգը: Սույն կարգով սահմանվել են հարկային, մաքսային և քաղաքացիական ծառայողների խրախուսանքի տեսակները և կիրառման չափանիշները, ինչպես նաև վերջիններիս տարեկան կատարողականի միավորների ցանկի կազմման կարգն ու ժամկետները:

2.1.2 Ծրագրեր և կատարողական /մաքսային ծառայության մասով/

Սույն թվականի սեպտեմբերի 14-ից 24-ը Հայաստանում են գտնվել Եվրոպական Հանձնաժողովի փորձագետները՝ Թվինինգ ծրագրային առաջարկի «Մաքսային հսկողության ընթացակարգերի կատարելագործում և կիրառում» թեմայով (որը հավանության է արժանացել Եվրոպական Հանձնաժողովի կողմից) գործողությունների ծրագրի կազմման նպատակով: Փորձագետները հանդիպել են Թվինինգ ծրագրային առաջարկի բաղադրիչների համար պատասխանատու ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային ծառայության պաշտոնատար անձանց, ինչպես նաև այլ շահագրգիռ կողմերի հետ: Թվինինգ ծրագրային առաջարկի գործողությունների ծրագիրը գտնվում է լրամշակման փուլում: Փորձագետների հաջորդ այցը նախատեսվում է 2010 թվականի նոյեմբեր ամսվա ընթացքում:



2.2 | Գանգատարկումների և ծառայողական քննությունների ակնարկ

2.2.1 | Գանգատարկումներ և ծառայողական քննություններ /հարկային ծառայության մասով/

20.08.2010թ-ից մինչև 20.09.2010թ-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից լսվել են թվով 9 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որի արդյունքում թվով 31 հարկային ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից 20.08.2010թ-ից մինչև 20.09.2010թ-ն ընկած ժամանակահատվածում լսվել է թվով 18 բողոք, որից.

- բավարարվել է 5 բողոք,
- մերժվել է 13 բողոք:

2.2.2 | Ծրագրեր և կատարողական /մաքսային ծառայության մասով/

21.08.2010թ-ից մինչև 20.09.2010թ-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից իրականացվել է թվով 5 ծառայողական քննություն, որի արդյունքների հիման վրա թվով 6 մաքսային ծառայողներ և 1 պայմա-

նագրային ծառայող ենթարկվել է կարգապահական տույժերի, այդ թվում՝

- 3 մաքսային տեսուչներ ստացել են նկատողություն
- 3 մաքսային տեսուչներ և 1 պայմանագրային ծառայող ստացել են խիստ նկատողություն:

2.3 | Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում

2.3.1 | Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում /հարկային ծառայության մասով/

2010թ. օգոստոսի 19-ին հայտարարվել է մրցույթ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության 22 թափուր պաշտոնները համալրելու նպատակով: Մրցույթն անց է կացվելու 2010թ. հոկտեմբերի 1-ին: Մրցույթին մասնակցելու համար դիմել են շուրջ 580 քաղաքացիներ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2010թ. հուլիսի 26-ի թիվ 2/1036 հրամանի համաձայն սեպտեմբերի 22-ին սկսվել է ՊԵԿ վերադաս մարմնի հարկային ծառայողների 2010թ. ատեստավորման գործընթացը:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն ս/թ սեպտեմբերի 6-ից մինչև 30-ը կազմակերպել է «Հայաստանի հարկային համակարգ» ուսումնական դասընթացը՝ 69 ակադեմիական ժամ տևողությամբ, հարկային ծառայության թափուր պաշտոններ



համալրելու համար անցկացվելիք մրցույթների մասնակիցներին նախապատրաստելու, համապատասխան մասնագետների հարկային օրենսդրության և վարչարարության դրույթներն ուսուցանելու նպատակով: Դասընթացին մասնակցելու համար դիմել են 51 քաղաքացիներ:

րության դրույթներն ուսուցանելու նպատակով: Դասընթացին մասնակցելու համար դիմել են 51 քաղաքացիներ:

2.4 | Հարկային և մաքսային թվերի համառոտագիր

2.4.1 | Հարկային վիճակագրության մի քանի թվեր


1	Ցուցանիշ	2010 թվական		
		Օգոստոս	հունվար-օգոստոս	Աճը նախորդ տարվա նկատմամբ (հունվար-օգոստոս)%
1	2	3	4	5
1	Հաշվառված՝ ԶՎՀՅ ստացած հարկ վճարողներ	1,097	9,887	92.1
2	Հարկային մարմնի կողմից պետ. բյուջե հավաքագրված եկամուտներ (մլն դրամ), այդ թվում՝	37,629.7	293,202.4	117.0
2.1	ԱԱՀ	9,238.9	69,915.5	143.4
2.2	Շահութահարկ	4,757.2	53,471.3	94.1
2.3	Ակցիզային հարկ	785.8	4,543.5	124.5
2.4	Եկամտահարկ	6,762.9	47,946.7	127.8
2.5	Պարտադիր սոցիալական ապահովության վճար	9,703.5	74,603.2	114.0
2.6	Այլ	7,215.9	43,556.7	113.3
3	Հարկային մարմնի կողմից կատարված ստուգումներ (հատ)	2,564	18,093	98.2
4	Հարկային ստուգումների արդյունքում լրացուցիչ առաջադրված գումարներ (մլն. դրամ)	1,634.6	17,965.1	88.1

2.4.2 | Մաքսային վիճակագրության մի քանի թվեր

1	Ցուցանիշ	2009թ.		2010թ.		Աճը նախորդ տարվա նկատմամբ %	
		հունվար-օգոստոս	օգոստոս	հունվար-օգոստոս	օգոստոս	հունվար-օգոստոս	Օգոստոս
1	2	3	4	5	6	7	8
1	Մաքսային մարմնի կողմից պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ (մլն դրամ)	137,327	20,763	171,376	23,214	124.8	111.8
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը (մլն դրամ), այդ թվում՝	759,553	132,349	1,137,432	151,531	149.8	114.5
2.1	Արտահանում (մլն դրամ)	135,395	23,841	228,865	31,066	169.0	130.3
2.2	Ներմուծում (մլն դրամ)	624,158	108,508	908,568	120,465	145.6	111.0
3	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվը (միավոր)	16,045	3,249	17,793	4,027	110.9	124

ևս մեկ քայլ՝

ԲԻԶՆԵՍԻՆ ԸՆԴԱՌԱԶ



եռամսյա պարբերականությամբ
հրատարակվում են
«Հարկատու» և «Մաքսատուն»
ամսագրերը